

«ԿԱՐՏԸՆ ԹԱՌԻԸՐ» ՊԱՆԴՈՎԻՆ ՄԵԶ

ԼԻՔԱՆԱՆՅԻ ԱՐԴԻՆԱԲԵՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԶԱՇԿԱՆ ԸԱՆԴԻՊՈՒՄ ՄԸ՝ ՅԱԲԵԼԵԱԼ ԱՐԺԵՔԻ ՏՈՒՐՔԻՆ ՄԱՍԻՆ

Վերջին ժամանակաշրջանին Լիբանանի տնտեսությունը ապրեցավ յատկանշական վերվայրումներ: Կառավարությունը կողմնորոշվեց արդյունաբերության օրինակներ, որոնցում գլխավորն է յաբելեալ արժեքի տուրքի դրույթները:



Զեկուցաբերները



Ներկայացրեց մաս մը: (Լուսանկարները՝ Պ. ԶԱՐՈՒԿԵԱՆԻ)

Այս կացութեան հետևանքով, քաղաքացիին եւ յատկապէս արդիւնաբերող ու գործարար դասակարգին մօտ յառաջացած շփոթը պարզելու եւ գործնական գիտելիքներ փոխանցելու նպատակով, Լիբանանցի Արդիւնաբերողներու Միութիւնը կազմակերպեց հասնողի ունեցաւ երէկ երեկոյեան ժամը 6:00ին, «Կարտըն Թատրը» պանդոկին մէջ:

Հանդիպումին ներկայ էին նախկին նախարար Արթուր Սպարեան, մեծ թիւով լիբանանցի արդիւնաբերողներ եւ գործարարներ, ինչպէս նաեւ լիբանանեան լրատուամիջոցներու ներկայացուցիչներ: Հանդիպումը վարեցին Լիբանանցի Արդիւնաբերողներու Միութեան նախագահ ժաբ Սարրաֆ, վարչութեան անդամներ՝ Նապարթ Սապունճեան, Կարպի Մարգարեան եւ Ֆատի Ապպուս: Խօսք առաւ Ն. Սապունճեան, որ անդ-

րադառնալով Լիբանանի տնտեսութեան ներկայ իրավիճակին, ըսաւ, որ լիբանանեան ճարտարարուեստը կը դիմագրաւէ դժուարութիւններ, կորս յաղթահարելու համար կարելի է յուծումներ գտնել: «Այս դժուարութիւնները նկատի ունենալով, կառավարութիւնը ստեղծած է դիրուսթիւններ, ինչպէս՝

մաքերու ջնջում, մեծաւմար վարկերու յատկացում, արտածումներու գծով համաձայնագիրներու կնքում, միջպետական տնտեսական գործակցութիւններ եւ այլն», ըսաւ ան:

Ինչ կը վերաբերի յաբելեալ արժեքի տուրքին, Ն. Սապունճեան նշեց, որ թէ-եւ առաջին ակնարկով այս տուրքը ժխտական կը թուի, սակայն երկար ժամանակի վրայ օգտուողը պիտի ըլլայ տնտեսութիւնը եւ քաղաքացին:

Անդրադառնալով Լիբանանի ճարտարարուեստի եւ արդիւնաբերութեան մարպետի բարելաման մէջ հայերուն ներդրումին, Ն. Սապունճեան ըսաւ, որ Լիբանանի Արդիւնաբերողներու Միութեան մէջ հայ գործարարները կը ներկայացնեն կարելու համար մասնակցութիւն: «Անոնք, ինչպէս անցեալին, այսօր եւս աշխատանքով եւ յարատեւութեամբ կը գտնեն այս հանգրուանը շրջանցելու միջոցները»:

Հանդիպումին ընթացքին նաեւ խօսք առին ժ. Սարրաֆ եւ Ֆ. Ապպուս, որոնք յաջորդաբար բացատրեցին արդիւնաբերութեան մարպետի վրայ յաբելեալ արժեքի տուրքին գործադրութեան դրույթները:

Ներկայերը առիթը ունեցան քննարկուած հարցերուն շուրջ արտայայտելու իրենց տեսակետները եւ ուղղելու լուսաբանական հարցումներ:

Հանդիպումին աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ՆԱԽԱԳԱՀ ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ ԾՈՐՃ ՊՈՒՇԻ ՀԵՌԱԳԻՐԻՆ

Հանրապետութեան նախագահ զօր. Էմիլ Լահուատ երէկ նամակ մը յղեց Միացեալ Նահանգներու նախագահ Զործ Պուշի, շնորհակալութիւն յայտնելու Ատհայի տօնին առիթով անոր յղած շնորհակարարական հեռագիրին:

Նախագահ Լահուատ նկատել տուաւ, որ այս տարի Ատհայի տօնակատարութիւնները մտայլ միջնորոտի մէջ են՝ Միջին Արեւելքի մէջ տիրող խիստ լարուածութեան պատճառով:

Հրամայական է, որ բոլորս աշխատինք վերջ դնելու անընդհատ շարունակուող արեւնահեղութեան, իսկ այս նպատակին հասնելու լաւագոյն ձեւն է հոգալ անոնց, որոնք անարդարութեան գոհ են եւ իրաւազուրկ, ըսաւ նախագահ Լահուատ, յոյս յայտնելով, որ «այս իրձերը իրականութիւն կը դառնան Միացեալ Նահանգներու ղեկավարութեամբ»:

Նախագահ Լահուատ նաեւ զոհունակութիւն յայտնեց ամերիկեան Քոնկրէսի անդամներու հետ իր ունեցած հանդիպումներուն համար, հաստատելով, որ այս ուղղակի եւ անմիջական հանդիպումները լաւագոյն միջոցն են ամրապնդելու եւ զարգացնելու երկու երկիրներուն միջեւ երկխօսութիւնը:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու դեսպան Վինսթ Պէթլը, Միջին Արեւելքի մէջ ամերիկացի դեսպաններու ժողովին ներկայ գտնուելու համար իր Ուաշինկթըն ճամբորդութեան նախօրեակին երէկ այցելեց նախագահ Լահուատի, որ բացատրեց վերջին գործադրումներուն, մասնաւոր՝ պաղեստինեան շրջաններուն մէջ իրագործութիւններուն նկատմամբ Լիբանանի կեցուածքը:

Լահուատ երէկ նաեւ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիլ Պըրրիի եւ անոր հետ քննարկեց ընդհանուր հարցերը, կեդրոնանալով տնտեսական վիճակին եւ այս դժուր կառավարութեան վերջին միջոցառումներուն վրայ:

Նախագահ Լահուատ երէկ նաեւ ընդունեց ընդհանուր դատախազ Ատանի Ատտուժը եւ պետութեան անվտանգութեան ուժերու ընդհանուր տնօրէն գործադրար Մանսուրը, իսկ Ատհայի տօնին առիթով շնորհակարարական հեռագիրներ յղեց արաբական եւ իսլամական երկիրներու ղեկավարներուն:

ԶՕՐ. ՄԻՇԷԼ ՍԼԷՅՄԱՆ ԱՅՅԵԼԵՑ ՊԵՐԱՍ

Բանակի ընդհանուր հրամանատար զօր. Միշէլ Սլէյման երէկ այցելեց Պէքայի մէջ բանակի գործադրար, ուր գինուորականներու հետ իր հանդիպումներուն ընթացքին ան ըսաւ, որ Լիբանանի պատմութեան զիմարտութեան «ուղիւստ» ահարկչութեան անբաստանութիւնը մէկն է այլ ճնշումներէն, որոնց նպատակն է մեզի պարտադրել, որ հրաժարինք մեր սկզբունքային կեցուածքներէն՝ դիմադրութեան գործադրիչ կանգնելու, իրաւէյեան օտնձգութիւններուն դիմադրելու եւ Սուրիոյ հետ զաշնակցելու անհրաժեշտութեամբ, բայց հակառակ այս ճնշումներուն՝ կառուած պիտի մնանք մեր արդար իրաւունքին, մեր հողերու ազատագրումին եւ արդար ու ամբողջական իազդութեան մեր ձգտումին:

Երջանին ապահովութեան համար բանակայիններու ճիգերն ու զոհողութիւնները դրուատելով, զօր. Սլէյման անոնց կոչ ուղղեց մնալու պարտաստ, զէմ դնելու իսրայէլեան ոտնձգութիւններուն եւ ապահովութեան ու սուրիական ուժերուն հետ պայքարելու ոճրագործութեանց ու թմբեցուցիչ մաքսաննեղութեան դէմ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՖՈՒՏ ԶՐՈՅՑ - ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Նիւթ՝ T. V. A.

Զեկուցաբեր՝ ՅԱԿՈՒ ԱՐԱՇԱՄԵԱՆ

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 26 Փետրուար 2002, երեկոյեան ժամը 8:00ին, 3. Տըր Սելընցեան քաղաքապետի մէջ:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ՇԵՇՏԷ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիլ Պըրրի երէկ երեսփոխաններու հետ իր ունեցած հանդիպումներուն ընթացքին զիտել տուաւ, որ պաղեստինեան շրջաններուն մէջ վերջին օրերուն ցուցաբերուած պաղեստինցի ժողովուրդի պայքարի ոգին, անվեհերութիւնը եւ փնտրական գործողութիւններու ճշգրտութիւնն ու որակը անկիւնադարձային նշանակութիւն ունին եւ հետքեր պիտի ձգեն հետագայ պարագայումներուն վրայ:

«Բաւարար չէ մեծարել պաղեստինցի քաղաքացիները. անոնց պոռաբերութիւնները վերջ դրին արաբական խաւարին եւ արեւի լոյս սփռեցին դիմագրաւելու մարտահրաւիրները, մասնաւոր արաբական վեհաժողովը», ըսաւ Պըրրի: Ան բացատրեց, որ նախապէս կոչ կ'ուղղէր արաբներու խիղճին, որ պէտք է նեղուկ կանգնին ինքիֆատային, իսկ այսօր կը վախնայ, որ արաբներ վեհաժողովին շրջանցեն պաղեստինեան կեցուածքը, մինչ անոնք պէտք է դասեր քաղեն իսրայէլեան եւ միջազգային արձագանգներէն: Այս ծիրէն ներս ան նկատելի կացութիւն, որոնք կը կարծէին, թէ իսրայէլ շուտով պիտի խեղդէ ինքիֆատային, այսօր իրենց նախապէս մերժած սէնտակալ կեցուածքները կ'ընդունին՝ օգնութեան պարան երկարելու իսրայէլի:

Պըրրի մտավախութիւն յայտնեց, որ արաբական վեհաժողովը կրնայ Եսսէր Արաֆաթի ներկայութիւնը ապահովելու համար պիշիլ ինքիֆատային, բան մը, որ կը մերժեն պաղեստինցիք:

Խորհրդարանի նախագահը զիտել տուաւ, որ եթէ պաղեստինցի դիմադրողներու ճիգերով պաղեստինեան շրջաններու պարագայումներուն ընթացքը նոյն ուղղութեամբ շարունակուի, ապա լիբանանցիք լուրջ լոյս պիտի ունենան միանգամընդմիջտ վանելու պաղեստինցի գաղթականներու բնակեցման սպառնական ուրուականը:

«Լիբանանցիներս կը մղենք դիմադրական կռիւ մը, որ նուազ լուրջ կամ վտանգաւոր չէ պաղեստինցիներու մղածին, որովհետեւ մենք կը դիմադրենք այն միջազգային շրջափակումին, որ Լիբանանի պարտադրուեցաւ որպէս պատիժ Իսրայէլի դէմ տարուած յաղթանակին», ըսաւ ան, կոչ ուղղելով արաբական աշխարհին՝ նկատի առնելու Լիբանանի ժողովուրդին տնտեսական տագնապը եւ ապրուստի դժուարութիւնը:

Շար.՝ Էջ 3

ԱՐՅԱՆԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՒՏԻՆ

● Լուի - Սերժ Օհանեանի մահուան Ա. տարելիցին առիթով, Ազգային մը 100,000 Լ. ո.

ԼՕԽԻ «ԿԱՐՍ» ՄԱՍՆԱԾԻԻՂ
ՇԵՐԹԱԿԱՆ Բ. ԺՈՂՈՎ
Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 26 Փետրուար 2002ին, առաւօտեան ժամը 9:30ին, Ազատամարտ ակումբի «Չուխատարեան» սրահին մէջ: Անդամուկներուն ներկայութիւնը խիստ փափաքելի է:
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դ. «ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ» ԿՈՍՒՏԵ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԸ
ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ
Նիւթ՝ ՐԱՅ ԴԱՏԸ ԱՅՍՕՐ
Կը ներկայացնեն ՄԵԼԻՔ ԳԱՐԱԳԱՒՈՐԵԱՆ, ԶՕՀՐԱՊ ՂԱԶԱՐԵԱՆ եւ ՏՈՒՔ. ԷԼԻ ԹԱՇՃԵԱՆ
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 22 Փետրուար 2002, երեկոյեան ժամը 8:00ին, «Նիկոլ Դուման» ակումբի «Սարգիս Ազնաւորեան» սրահին մէջ:
ՇՐԱԻՐ

NARRA TRADING & GENERAL SERVICES CO. S.A.R.L.
ՆԱՐԱ ԹԵՅՏԻՆԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ս.Պ.Ը.
(Սեփականատը՝ Վաիէ Մանուշակեան)
ՎԻԵԹՆԱՄԵՆ ԵԹՈՎՊՈՒՅՆ ՍՐԻ ԼԱՆՔԱՅԵՆ ԵՒ ՖԻԼԻՓԻՆԵՆ ՍՊԱՍՈՒԿՆԵՐՈՒ ԱՊԱՇՏՈՒՄ
● Անմիջական յանձնում եւ ապահովագրութիւն:
● Մեր նշանաբանը՝ անկեղծութիւն, ապահովութիւն,
● Մասնաւոր գիներ, վճարման դիւրութիւն եւ երկար տարիներու փորձառութիւն:
Պաշտօն, City Hospital հիւանդանոցի փողոց, «Էլի» Դրամատան շէնք, 4րդ յարկ: Հեռ. 03/324799, 01/897633 եւ 03/489989

ՀԱՅ ՍԿԱՌՏԻ ՕՐՈՒՄՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ
Նախագահութեամբ՝
ՏՈՒՔ. ՍԵՊՈՒՀ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ
(Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար)
Կազմակերպութեամբ՝
Հ. Մ. Ը. Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՍԿԱՌՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԵՒ ԽՄԲԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տեղի կ'ունենայ Կիրակի, 24 Փետրուար 2002, երեկոյեան ժամը 5:00ին, ԵՈՒՆԵՍԵՕԻ պալատին մէջ, Պէյրութ:
● Ձեռնարկին կը յաջորդէ հայկական մշակոյթը ներկայացնող ցուցահանդէս եւ հիւրասիրութիւն:
ՍՈՒՏԸ ԱԶԱՏ

ԸԱՅԿԱԶԵԱՆ ԸԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՒ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայկազեան համալսարանի հայագիտական ամսագրի կազմակերպությանը, 15 Փետրուարի երեկոյան ժամը 7:30ին, համալսարանի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ դասախօսական երեկոյ մը՝ նուիրուած իրանահայ համայնքին եւ հայ-իրանական արդի ժամանակաշրջանի յարաբերութիւններուն:

Ձեռնարկին բացումը կատարեց համալսարանի պատմագիտութեան եւ քաղաքագիտութեան բաժանմունքի վարիչ ղոկտ. Արա Սանդեանը, որ օրուան դասախօսը՝ Արման Բուդաղեանը ներկայացնելէ ետք ըսաւ, թէ պիտոյք հայ կեանքին մէջ առկայ է գաղութներու հետաքրքրութիւնը ուրիշ երկրի մը գաղութը նանցնալու եւ անոր իրավիճակին եւ հարցերուն ծանօթանալու:

Օրուան դասախօսը՝ Արման Բուդաղեանը ծնած է Իրան, ան 1988ին աւարտած է Երեւանի Պետական համալսարանի պատմութեան բաժանմունքը: 1992ին Երեւանի մէջ պաշտպանած է պատմութեան գծով թեկնածուական աւարտանագը: Միաժամանակ երկու տարի պարսկերէն դասաւանդած է միջազգային յարաբերութիւններու բաժանմունքին մէջ: Աւելի ուշ, չորս տարի իրանեան գիտահետազոտական հիմնարկներու մէջ աշխատած է իբրեւ կովկասեան հարցերու մասնագէտ: Թեհրանի մէջ վերջերս հաստատուած հայագիտական հետազոտութիւններու իրանական կեդրոնի հիմնադիր տնօրէնն է:

Արման Բուդաղեանը իր դասախօսութեան առաջին բաժինում ծանրացաւ Սփիւռքի ամենէն հին գաղթօճակներէն՝ պարսկահայութեան անցեալին, ներկայից եւ գաղութին դիմագրւած դժուարութիւններուն վրայ:

Երկրորդ բաժինով դասախօսը ներկայացուց հայ-իրանական արդի ժամանակաշրջանի յարաբերութիւնները եւ անոնց կարեւորութիւնը:

Ա. Բուդաղեանը ըսաւ, թէ իրանահայութեան գոյութեան ակունքները բաւական հին են, որովհետեւ պատմութեան ընդմէջէն կը յայտնուի, թէ հայերը Իրանի մէջ ապրած են հին ժամանակաշրջաններուն՝ մասնակցելով երկրին ռազմական, քաղաքակրթական եւ մշակութային կեանքին: Իրանի պատմութեան հետ ռազմահետաքրքր, դասախօսը ներկայացուց իրանահայ գաղութը, անոր գարգացումը եւ դիմագրւած դժուարութիւնները: Ան անդրադարձաւ Իրանի մէջ պատահած այն դեպքերուն եւ իրադարձութիւններուն, որոնք անմիջական ազդեցութիւն ունեցած են գաղութին վրայ: Ան ըսաւ, թէ գաղութը միշտ իր ուրոյն դերն ու արժէքը ունեցած է Իրանի մէջ եւ փորձած է ամեն ձեւով պահել երաշխակց յարաբերութիւնները: Դասախօսը նշեց, թէ իրանցիները միշտ գոհունակութեամբ եւ դրուատիքով կը խօսին հայ գաղութին մասին:

Գաղութին կեանքին մասին խօսելով՝ Ա. Բուդաղեանը ըսաւ, թէ 20րդ դարուն, համաշխարհային պատերազմներու ընթացքին եւ անկէ ետք իրանահայ կեանքը մեծ վերիվայրումներ ապրեցաւ: Այդ շրջանին ներգաղթ տեղի ունեցաւ եւ հազարաւոր մարդիկ եկան Իրան եւ երկրին հայ կեանքը եռաց: Ուսեալ, քաղաքական հայեացք ունեցող անձեր մուտք գործեցին Իրան եւ Թաւրիզ մօտ կէս դար եղաւ հայ մշակոյթի եւ քաղաքակրթութեան կեդրոն: Խօսելով գաղութի ներկայ կացութեան մասին՝ դասախօսը ըսաւ, թէ այսօր գաղութը կը հաշուէ մօտ 100 հազար հայ: 1979ին երկրին մէջ կար 200-220 հազար հայ, սակայն պարտադիր եւ անոր հետեւած տնտեսական տագնապին ու արտագաղթին պատճառով գաղութին թիւը նուազեցաւ: Այժմ իրանահայութիւնը ունի երեք թեմ՝ Ատրպատական, Թեհրան եւ Սպահան (Նոր Ջուղա), 26 դպրոց, 30 եկեղեցի եւ քոյր միութիւններ ու կազմակերպութիւններ: Անիկ կը դիմագրւուի ընկերային եւ տնտեսական զանազան հարցեր:

Ա. Բուդաղեանը ըսաւ, թէ Իրան - Հայաստան յարաբերութիւնները 1991 թուականին զարգացան ու ամրապնդուեցան, եւ ասոր խօսուեցաւ Կապուտի Էջմիածնի Գաղութի Կառուցման Կոմիտէի մասին: Ան նշեց, թէ սերտ կապ կայ նաեւ իրանահայութեան եւ Հայաստանի միջեւ:

Դասախօսը երկու երկիրներուն յարաբերութիւնները քննարկեց իրանական ակնոցով: Ան խօսեցաւ Հայաստանի մէջ Իրանի ներդրումներուն եւ տարած գործունէութեան, աւելցնելով, թէ անոնց արդիւնքները կը տեսնենք այսօր եւ պիտի տեսնենք ապագային: Ան ըսաւ, թէ երկու երկիրներուն միջեւ եղած ծրագրերը կը նային դեպի ապագայ: Դասախօսը անդրադարձաւ Իրան - Հայաստան ուղիին եւ կազատարի կառուցման կարեւորութեան:

Իր խօսքի աւարտին Ա. Բուդաղեանը ըսաւ, թէ երկու երկիրներուն ապագան, գոնէ յառաջիկայ 50 տարիներուն, կապուած է իրարու:

ԳԱՐԵԳՐԻՆ Բ.Ի ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ՍՈՒՐԻՈՅ ԴԵՍՊԱՆԻՆ ՀԵՏ

19 Փետրուարին Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոս Ս. Էջմիածինի մէջ Հանդիպում ունեցաւ Հայաստանի մէջ Սուրիոյ դեսպան Համէտ Հասանի հետ, որ կ'աւարտէ իր դիւանագիտական առաքելութիւնը Հայաստանի մէջ:

Գարեգին Բ. բարձր գնահատեց դեսպանի աւելի քան 4 տարուան գործունէութիւնը Հայաստանի մէջ՝ հաստատելով, որ չնորհիւ անոր ջանքերուն շօշափելի արդիւնքներ արձանագրուած են երկու երկիրներուն եւ ժողովուրդներուն յարաբերութիւններուն ամրացման աշխատանքին մէջ:

«Հայաստան գտնուելու ընթացքին Էջմիածինը ինձի համար մնայուն կերպով եղած է կարեւոր ու մեծ նշանակութիւն ունեցող այն վայրը, ուր ուզած եմ ըլլալ: Կը վերադառնանք Սուրիա լաւագոյն տպավորութիւններով ձեր երկրի, ժողովուրդի եւ եկեղեցւոյ մասին», ըսաւ Համէտ Հասան՝ իր երախտագիտութիւնը յայտնելով վեհափառի բարձր գնահատանքին համբար:

Հրժեշտ տալով դեսպանին, վեհափառը յաջողութիւն մաղթեց անոր հետագայ դիւանագիտական աշխատանքին մէջ՝ այն համոզուածով, որ այսուհետեւ եւս այդ առաքելութիւնը պիտի դրուի ի շահ երկու երկիրներու ժողովուրդներու բարեկամութեան:

ՀԱՅԿԱԿԱՆ ՔՈՆԵԱՔԻՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1907 թուականէն մինչեւ 2001 թուականի աւարտը, 94 տարիներու ընթացքին, Երեւանի քոնեաքի գործարանին արտադրութիւնները արժանացած են 161 մետալներու եւ մրցանակներու:

Ըստ ընկերութեան նախագահ Փիեռ Լառէչի, Փեռնո-Ռիթար խումբի Հայաստան ժամանելէն ի վեր (1998 թուականի Յունիս), ընկերութեան շնորհուած մրցանակներուն թիւը զգալիօրէն աւելցած է. վերջին 3,5 տարուան ընթացքին ընկերութեան շնորհուած են 71 տարբեր կարգի մետալներ եւ վկայականներ:

Փիեռ Լառէչի համաձայն, մրցանակներ շնորհուած են գործարանին արտադրած քոնեաքի բոլոր տեսակներուն: Մասնաւորապէս «Նայիրի» քոնեաքը արժանացած է 14 ոսկի մետալներու:

Նշենք նաեւ, որ 1999-2001 թուականներուն ընթացքին Երեւանի քոնեաքի գործարանին արտադրած «Արարատ» վաճառանիշով քոնեաքները Ռուսիոյ մէջ արժանացած են «Տարուան արտադրանք» մրցանակին:

ՕՏԱՐ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐՈՒ ԱԾԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Միջազգային Դրամական Ֆոնտի եւ Համաշխարհային Դրամատան մասնագէտներ կը կանխատեսեն, որ 2001-2005 թուականներուն Հայաստանի տնտեսութեան մէջ ուղղակի օտար ներգրումներու ծաւալը պիտի կազմէ երկրի ներքին համախառն արտադրանքի 5,3 առ հարիւրը:

Այս կանխատեսումը արձանագրուած է «Գործարար իրավիճակի կայունութիւնը եւ ԱՊՀի ցած եկամուտ ունեցող երկիրներուն մէջ աճի ապահովման քաղաքականութեան գերակայութիւնները» գեկուցումին մէջ, որ մշակուած է վերոյիշեալ կազմակերպութիւններու մասնագէտներուն կողմէ:

Այդ նոյն փաստաթուղթին մէջ կը նշուի, որ Ազգային վեհաժողովը շրջափակման վերացման պարագային Հայաստան կը կրկնապատկէ իր արտահանման ծաւալները:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՅ ԵՂԱՅՐԱԿՅՈՒԹԻՒՆ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ՍԵՑ ՊԱՇՏՅՈՒՆ ԶՐԶԱՆԻՆ ՊԱՇՏԱՍՈՒՆՔՆԵՐՈՒ

Հայ Առաքելական Եկեղեցւոյ Եղբայրակցութեան Երիտասարդացի պաշտամունքներուն պիտի պատգամեն Սեծի Տանն Կիլիկիոյ միաբան հայրերը:

Կիրակի, 24 Փետրուար 2002
«Առաջին Կիրակի» ժամը 5:30էն 6:30
ԸՈՂՁ. ՏԵՐ ԳՐԻԳՈՐ ՎՐԳ. ԳԻՖՈՒՄԵՆ

Կիրակի, 3 Մարտ 2002
«Տնտեսի Կիրակի» ժամը 5:30էն 6:30
ԳԵՐՊ. ՏԵՐ ՃԱՇԱՆ Ծ. ՎՐԳ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Կիրակի, 10 Մարտ 2002
«Ղառաւորի Կիրակի» ժամը 5:30էն 6:30
ԸՈՂՁ. ՏԵՐ ՍԱԿԱՐ ԱՐԳ. ԱՃԲԱՐԵԱՆ

Կիրակի, 17 Մարտ 2002
«Գալստեան Կիրակի» ժամը 5:30էն 6:30
ԸՈՂՁ. ՏԵՐ ՍԱՇՏՈՅ ՎՐԳ. ԳՈՊԱՆԵԱՆ

ՇՐՄԵՐ



ԼՕՏԻ «ՆԱՅԻՐԻ»
ՄԱՍՆԱԾԻՒՂ -
ԱՆԹԻԼԻԱՍ

ՀԵՐԹԱԿԱՆ Բ. ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 26 Փետրուար 2002, առաւօտեան ժամը 9:30ին, Աղբալեան ակունքի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ: Ընկերուհիներուն ներկայութիւնը փափաքելի է:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՅԱՅՏՆՈՒԵԼ ԵՆ ԱՆՈՐՈՇՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Անցեալ տարուան Դեկտեմբերին Ազգային ժողովի հաստատած հարկային փոփոխութիւնները փաթեթում ընդունուեց բարեգործական ծրագրեր իրականացնող եւ մարդասիրական օգնութիւն տրամադրող կազմակերպութիւններ հարկային արտօնութիւնն յաւելեալ արժէքի տուրքի գծով վերացընելու մասին փոփոխութիւնը: Նշուած կազմակերպութիւնները Յունուարի 1ից յայտնուել են անորոշ վիճակում: Նրանցից ոմանք վճարել են յաւելեալ արժէքի տուրքը, միւսները՝ հրաժարուել: Նման կացութիւնը կառավարութեանը ստիպեց մէկ այլ կարգ ընդունել, ըստ որի պէտք է յստակացում մտցուէր այս հարցում: Սակայն դատեղի չունեցաւ:

15 Փետրուարին մարդասիրական օգնութեան գծով յանձնաժողովի նախագահ Վլադիմիր Մովսիսեանը փորձուեց քննարկել բարեգործների կասկածները: Ըստ նրա, օրէնքն ընդունուել է բարեգործութեան անունը սակ առեւտրական գործարքները թոյլ չտալու նպատակով: Սակայն տարեկան 28 միլիարդ դրամի մարդասիրական օգնութեան շուրջ 70 տոկոսն արդէն կանոնակարգուած է օրէնքով, ուստի նոր կարգը դրան չի առնչուում: Խօսքը ետ. էս. էյտ.ի, ՄԱԿի, մի շարք պետութիւնների բարեգործական ծրագրերին է վերաբերում: Մնացած 30 տոկոսի

մօտ 15 տոկոսը կազմող Հ.Բ.Ը.Մ.ի, Հայկական Միացեալ Հիմնադրամի, ՀՕՖԻ, Առաքելական եկեղեցու իրականացրած ծրագրերը եւս կասկածներ չեն յարուցում: Ստացուեց է, որ այս օրէնքն ընդունուել է ընդամենը մնացած 15 տոկոսի համար: Ըստ Վլադիմիր Մովսիսեանի, բարեգործները որեւէ գումարային յաւելում չեն վճարում: Դա ստանձնել է պետութիւնը եւ դառնալու է համաֆինանսաւորող՝ այդ մասին համապատասխան ատեաններին ներկայացնելու համար փաստաթուղթ տրամադրելով բարեգործական կազմակերպութիւններին:

Սակայն յիշեցնենք, որ սովորաբար «դեմոկրատական» օրէնքներին նախագծեր ներկայացնող արդարադատութեան փոխ նախարար Աշոտ Արովեանը մի քանի օր առաջ նշում էր, որ բարեգործական կազմակերպութիւնները պէտք է վճարէին յաւելեալ արժէքի տուրքը եւ փոխարէնը նոյն չափով փոխուէր ստանալին: Իսկ Վլադիմիր Մովսիսեանը 15 Փետրուարին բոլորովին այլ բան ասաց, ինչին արդէն անդրադարձանք: Հարց է ծագում՝ արժէքը ստեղծել այս խառնաշփոթը եւ եղած օրէնքերակալ դաշտը բաւարար է՞ր ապօրինութիւնները կանխելու համար:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

«Ազգ»

ԹՈՒՐԻՔԻԱՆ ՓՈՐՁՈՒՄ Է ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՅՆԵԼ ԿԱՐՍ - ԱԽԱԼՔԱՂԱՔ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

2001 թուականի Դեկտեմբերի 11-12ը Թիֆլիսում տեղի ունեցաւ ԹՐԱՍԵԿԱ ծրագրի միջկառավարական յանձնաժողովի նիստ, որի ընթացքում քննարկուելի է հաստատուել են այն հիմնական ուղիները, որոնցով եւրոպայի Կովկասով կապուել է Կենտրոնական Ասիայի հետ: Եւրոպա - Ասիա երկաթուղային ուղին Թուրքիայի տարածքով գալիս է Հայաստան եւ Հայաստանից ճիղաւորուում երեք ուղղութիւններով: առաջինը՝ դէպի Վրաստան (Կարս - Գիւմրի - Այրում - Թիֆլիս), երկրորդը՝ իջեւանով Ազրպէյճան (Իջեւան - Ղազախ - Պաքո), երրորդը՝ Նախիջեւանով Ազրպէյճան (Կարս - Գիւմրի - Երեւան - Նախիջեւան - Մեղրի - Պաքո):

Թուրքիան, սակայն, չի ցանկանում սովորական եւ Կենտրոնական Ասիայի հետ կապուել Հայաստանի կամ միայն Հայաստանի տարածքով: Դրա վկայութիւնը Կարս - Ախալքալաք երկաթուղու շինարարութեան գաղափարն է, որը յաջողուել է Անգարայում եւ ժամանակ առ ժամանակ վերականգնանքներու փորձ է արւում: Թիֆլիսից Ախալքալաք կառուցուած երկաթուղի կայ, որը գործում է: Ախալքալաքից երկաթուղին շարունակուելու դէպքում Թուրքիան հնարաւորութիւն է ստանում կապուել Թիֆլիսին, այնտեղից Պաքոն՝ խուսափելով Կարս - Գիւմրի - Այրում - Թիֆլիս երկաթուղիից:

Ազրպէյճանական լրատուամիջոցները հաղորդում են, որ օրերս Անգարայում Թուրքիայի, Ազրպէյճանի եւ Վրաստանի միջեւ յաջողութեամբ աւարտուել են կարս - Ախալքալաք երկաթուղու շինարարութեան թեմատիկայի վերաբերյալ քննարկումները: 127 թիւով թուրքական կառուցուելիք հատուածը Թուրքիային կը կապի ներկայումս գործող

մասնակ Հայաստանը դէմ էր արտոյայտուել:

Տարբեր գնահատականներով Կարս - Ախալքալաք երկաթուղու կառուցման ծրագրի արժէքը 300-800 հազար տոյար է, իսկ կառուցման դէպքում՝ արդիւնաւէտութիւնը խիստ կասկածելի: Օրինակ, Ախալքալաք - Թիֆլիս երկաթուղին ձմրան ամիսներին պարապուրդի է մատնուում առատ ձեան պատճառով: Սակայն Կարս - Ախալքալաք երկաթուղին կառուցումն առաջին հերթին պայմանաւորուած է շրջանային գործօններով:

Թ. Յ.

«Ազգ»

ԱՉԳԱՅԻՆ Գ. ՉԱԹԱԼՊԱՇԵԱՆ - ԹՈՐԳՈՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՐԳԻ ԵՐԵԿՈՅ

ՄԵԿԱԲԱՍՈՒԹԵԱՐ՝ ԱՐՄԷՆ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ

●Շաբաթ, 2 Մարտ 2002, երեկոյան ժամը 8:00ին, Ս. Յակոբ եկեղեցւոյ «Տիրան Պապիկեան» սրահին մէջ: Կառատունը ապահովուած:

●Կիրակի, 3 Մարտ 2002, երեկոյան ժամը 6:00ին «Յովհաննէս Պողոսեան» սրահին մէջ:

Սակ՝ 10.000 լ.ո.

Ծանօթ.- Տոմսերը ստանալ «Վանայ Չայ»-էն, Համագայիցի գրախանութն, դպրոցի քարտուղարութենէ եւ ելոյթի օրերը կ'ընտել:

ՇԱԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Ս. ԱՍՏՈՒԱՑԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Առ ի գիտութիւն մեր հաւատացեալներուն, Ուրբաթ, 22 Փետրուար 2002ի երեկոյան ժամը 6:30ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ հսկումի արարողութիւն տեղի պիտի ունեցայ, մասնակցութեամբ դարբնակները սաներուն:

Այս ախրով պիտի քարոզէ դպրեվանքի տեսուչ ԳԵՐ. Տ. ՃԱՇԱՆ Ծ. ՎՐԳ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Սիրով կը հրաւիրուի մեր հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու հոգաբարար այս արարողութեան եւ լսելու հայր սուրբին պատգամը:

ՆՈՐ ԱՏԱՆԱՅԻ
Ս. ԱՍՏՈՒԱՑԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ
ԹՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ՄԵՆՔ ԿԸ ՀԱՒԱՏԱՆՔ, ՈՐ ԱՅՍ ԳԱՂՈՒԹԸ ՏԱԿԱԻՆ ՈՒՆԻ ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ՆԵՐՈՒԺ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԲԱԶՄԱՃԱԿԱՏ ՊԱՅՔԱՐԻՆ ՄԷՁ ԻՐ ԱՆՀԱՄԵՄԱՏԵԼԻ ՆԵՐԳՐՈՒՄԸ ՈՒՆԵՆԱԼՈՒ

Կր հաստատե Ը.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտեի ներկայացուցիչ Յովիկ Մխիթարեան իրեն հետ մեր ունեցած հարցազրույցին ընթացքին

«Ա.Ջ.Դ.Ա.Կ».- Մեր հարցազրույցին տուն գտնուող պատճառը հիմնականին մէջ Հ. Յ. Դ. 111ամեակի ընթացքին ձեր կատարած կարգ մը յայտարարութիւններն են, որոնք կը վերաբերին Եւրոպայի Գերմանացի քաղաքականութեան, Եւրոպայի Գերմանացի քաղաքականութեան, Եւրոպայի Գերմանացի քաղաքականութեան դժուարութիւններուն:

Սկսիմք ամէնէն շատ քաջկատու հարցին՝ լիբանանահայ քաղաքականութեան իրենց յարգանքները: Ի՞նչ է այսօր իրավիճակը:

ՅՈՎԻԿ ՄՄԻԹԱՐԵԱՆ.- Լիբանանահայ գաղութի իրաւունքներու անտեսման հիմնահարցը խորքին մէջ կը վերաբերի 30 հոգիներու կառավարութեան մէջ մէկ հայ նախարարի անդամակցութեան, որ իրեն երեւոյթ աննախընթաց է: Տեղեակ էք արդէն, որ օրին Կեդրոնական Կոմիտէի որոշումով իրեն բողոքի արտայայտութեան անկախութեամբ էր նախարարին՝ կառավարական նիստերու մասնակցութիւնը: Երեւոյթը սրբազրեւու կառավարութեան պաշտօնական յայտարարութեան հիման վրայ էր, որ կուսակցութիւնը որոշեց նախարար ընկերով մասնակցութիւնը կառավարութեան նիստերուն՝ յուսալով որ ամէնէն արագ միջոցին կը վերականգնուէր լիբանանահայ համայնքին անտեսուած իրաւունքը:

«Ա.Ջ.Դ.Ա.Կ».- «Ամէնէն արագ միջոց»ը փաստօրէն մօտաւորապէս մէկուկէս տարի է արդէն:

ՅՈՎԻԿ ՄՄԻԹԱՐԵԱՆ.- Դժբախտաբար կառավարութեան պաշտօնական յայտարարութեան չհետեւեցան գործնական քայլեր: Ներլիբանանեան հարցերն ու մանաւանդ շրջանային հրատապ խնդիրները լուսարձակներ կեդրոնացուցին տարբեր ուղղութիւններու վրայ: Այսուհանդերձ չի նշանակեր, որ հարցին հետապնդումը անկախութեամբ է մեր կողմէ: Ինչպէս նկատած էք, մեր բոլոր պաշտօնական ելոյթներուն այս հարցը կը շարունակէ զբաղւի մեր քաղաքական յայտարարութիւններուն մտաւորական գործընթացը: Մեր քաղաքական բազմակողմանի հանդիպումներուն ընթացքին եւս, բնականաբար, կը շարունակենք հետապնդել ցարդ անյոյժ մնացած, բայց մեզի համար անյետաձգելի այս հարցը:

«Ա.Ջ.Դ.Ա.Կ».- Կառավարութեան անդամակցութեան հարցին անընթեր պետական նշանակումներ եկան առգամ մը եւս փաստելու, որ այս գաղութին իրաւունքները լիարժէք ձեւով չեն յարգուած:

ՅՈՎԻԿ ՄՄԻԹԱՐԵԱՆ.- Ճիշդ է հաստատուած. հոն եւս ի վնաս մեր համայնքին արձանագրուեցան իրաւունքի խախտում, որուն ի տես՝ Կեդրոնական Կոմիտէն նոյն օրն իսկ հանդէս եկաւ համապատասխան յայտարարութեամբ, ուր ողորմելի էտք երկրին պետական-վարչական բարեկարգումներու առաջադրանքով կառավարութեան կատարած նոր մարդուժի նշանակումները՝ ընդգծեց, որ հայ համայնքը այս առումով չէ ստացած իր բոլոր իրաւունքները:

«Ա.Ջ.Դ.Ա.Կ».- Գաղութը միանշանակօրէն չի իրարորոշուեցաւ այս երեւոյթին դիմաց. եղան նոյնիսկ գոհուցակութիւն յայտնողներ:

ՅՈՎԻԿ ՄՄԻԹԱՐԵԱՆ.- Չեմ բաժնէր այս տեսակէտը. փաստօրէն Կեդրոնական Կոմիտէի յայտարարութեան հետեւեցան Ս. Մննդեան տօնին առիթով Եւրոպայի Կիւրիոյ կաթողիկոս Արամ Ա.ին, Եւրոպայի կէ պատրիարքին կատարած յայտարարութիւնները՝ նշելու համար կարեւորագոյնները: Չմոռնանք, որ Կեդրոնական Կոմիտէի յայտարարութեան միայն օր մը ետք կառավարութեան նիստի որոշումներուն ակնարկելով՝ տեղեկատուութեան նախարար Ղազի Արիտի յայտարարեց, որ նշանակումներու գործընթացին մէջ պէտք է պահել միջամտանքային հաւասարակշիւութիւնը եւ պէտք չէ անտեսել որեւէ համայնքի իրաւունքը. նախարարը այստեղ նշեց նաեւ լիբանանահայ համայնքը: Ուրեմն մեր պահանջը ստացած էր համազարուցիկ յայտարարութիւն եւ ամբողջութեամբ՝ կառավարութեան յայտարարութեամբ:

«Ա.Ջ.Դ.Ա.Կ».- Իսկ գործնական քայլեր երեւոյթի սրբագրութեան համար:

ՅՈՎԻԿ ՄՄԻԹԱՐԵԱՆ.- Պէտք է ըսել, որ նշանակումներու հարցը տակաւին բաց թողածօրք մըն է կառավարութեան համար: Ի տարբերութեան հայ երկրորդ նախարարի նշանակման հարցին՝ այստեղ իրեն շահագրգիռ կողմ մենք առանձին չենք: Կան շահագրգռուած տարբեր կողմեր եւ կան տակաւին թափուր պաշտօններ:

«Ա.Ջ.Դ.Ա.Կ».- Ի՞նչ պատրաստութեամբ մարդու առաջադրած է իր պետական պաշտօնը:

Ներու համար:

ՅՈՎԻԿ ՄՄԻԹԱՐԵԱՆ.- Պետական նշանակումներու պարագային մեր հիմնական առաջադրանքը, անուններէն աւելի լիբանանահայ համայնքին իրաւունքի չափաբաժինի ապահովման հարցն էր: Կառավարութեան կազմութեան փորձառութեան մեկնելով՝ պիտի ուզէինք, որ լիարժէք ձեւով յարգուէր մեր իրաւունքը. հետեւաբար մեր հիմնական եւ առաջին պահանջը այդ էր: Լիբանանահայ համայնքին իրաւունքը յարգուեցաւ մասնակի ձեւով: Կը պահանջենք իրաւունքի յարգումին ամբողջացումը, որուն համար առաջադրած ենք համապատասխան մասնակցութեամբ անուններ:

«Ա.Ջ.Դ.Ա.Կ».- Անցնիմք տարբեր հարթակի վրայ, խօսելու համար Լիբանան - Հայաստան միջպետական յարաբերութիւններուն եւ այդ շրջածիւրէն Երեւոյթ. Հ. Յ. Դաշնակցութեան կեցուածքին կամ առհասարակ բերած ներդրումին:

ՅՈՎԻԿ ՄՄԻԹԱՐԵԱՆ.- Հարցումի առաջին բաժինին վերաբերեալ վաւերական արժեւորում կատարելու համար հաւանաբար պէտք է դիմել Եւրոպայի Հայաստանի, Եւրոպայի պետութիւններու ներկայացուցիչներուն, հանգուստնաւոր տեսակէտներ ունենալու համար: Բայց եթէ նկատի ունենանք երկկողմանի պաշտօնական յայտարարութիւնները, պետական պաշտօնատարներու փոխայցելութիւններն ու կնքուած պայմանագրերը, կրնանք միայն հաստատել, որ Հայաստան - Լիբանան միջպետական յարաբերութիւնները նուազած են բարձր մակարդակ եւ կ'ընթանան զանազան բնագաւառներու՝ պաշտպանութեան, կրթական, մշակութային, եւ այլն, ամբողջական գործակցութեան հետեւեցողով: Կը մնայ, որ կնքուած պայմանագրերը հետզհետէ սկսին գործնականացուիլ, որուն համար մենք իբրեւ կուսակցութիւն միշտ պարտաստ ենք անոր յանդիմանութեան հիմնովին նպաստելու:

Ինչ կ'ը վերաբերի կուսակցութեան բերած ներդրումին, այստեղ ուրեմն կարելի է խօսիլ Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի կազմակերպութիւն - Հայաստանի դեպարտմենտի յարաբերութիւններուն մասին: Քաղաքական ամէնէն աննպաստ պայմաններու մէջ իսկ, երբ Դաշնակցութիւնը հայրենիքի մէջ ենթարկուած էր ամէնէն խիստ ու ամէնէն բիրտ չարակամքի, մենք, իրեն կուսակցութիւն մեր յարաբերութիւնները չենք խցած Հայաստանի դեպարտմենտի հետ: Բարեբախտաբար անցած են այդ օրերը եւ որեւէ նպաստակարար մարտերուն չի ներկայացներ տիրուր յիշատակներու վերաթարմացումը... Հայաստանի մէջ իշխանափոխութեան առողջ շրջադարձն էտք մենք շատ բնական ու արդիւնաւէտ գործակցութիւն ունինք Հայաստանի դեպարտմենտի հետ:

«Ա.Ջ.Դ.Ա.Կ».- Պետական պաշտօնատարներու այցելութեան կազմակերպումը ի՞նչ

կ'առաջադրէր ձեր կողմէ:

ՅՈՎԻԿ ՄՄԻԹԱՐԵԱՆ.- Կ'ուզեմ ճշգրտակատարել այստեղ. Հայաստանի Հանրապետութեան պետական գանձանի պաշտօնատարներու այցելութիւնը Հ. Յ. Դաշնակցութիւնը չէ որ կը կազմակերպէ: Անոնք դիւանագիտական հասկացողութեամբ կը կազմակերպուին երկիրներու արտաքին գործոց նախարարութիւններու կողմէ: Կը պատահի սակայն, որ Երեւանի քաղաքապետը Լիբանան հրաւիրուի Պէյրութի քաղաքապետին կողմէ, կամ պաշտպանութեան նախարարը այստեղի իր պաշտօնակիցին կողմէ: Բնականաբար պաշտօնական այցելուները ուզեն հանդիպիլ Հայաստանի կեդրոններ, այցելիլ լիբանանահայ համայնքի ինքնապաշտպանութեան ընթացքին ինչպէս նախատեսուած յուշակոթողներ կամ հայկական աւան: Հոս այդ մեծ է ու անփոխարինելի Հ. Յ. Դաշնակցութեան դերը Ժողովրդային ընդունելութիւններու կազմակերպման մէջ:

Անշուշտ չենք խօսիր Հ. Յ. Դաշնակցութեան անդամ կամ անոր բարձրագոյն մարմիններուն մաս կազմող պետական պաշտօնատարներու այցելութեան մասին (վահան Յովհաննիսեան, Լեւոն Մկրտչեան), որոնք տեղի ունեցան Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի կեդրոնական կոմիտէի հրահրով եւ կազմակերպութեամբ:

«Ա.Ջ.Դ.Ա.Կ».- Վերադառնալով ներհամայնքային հարցերուն եւ խօսիմք այսօր գաղութի դիմագրուած դժուարութիւններուն մասին: Յատկանշական էր, որ Հ.Յ.Դ. 111ամեակի տօնակատարութեան ընթացքին ձեր կատարած յայտարարութիւնները տեղ վերադարձուեցին զանազան մարգերու կապուած տագնապներուն: Հիմնականը անշուշտ տնտեսականն է...

ՅՈՎԻԿ ՄՄԻԹԱՐԵԱՆ.- Տնտեսական տագնապը միայն լիբանանահայ գաղութին վերաբերող խնդիր չէ. ամբողջ Լիբանանն ու շրջանը խրած են տնտեսական տագնապի մէջ. տակաւին կը խօսուի տնտեսական համաշխարհային տագնապի եւ անոր ձգած անդրադարձներուն մասին: Եւ բնական է, որ տնտեսական տագնապը աւերներ գործէ արդէն իսկ քաղաքացիական պատերազմ պարած եւ հետզհետէ իր ուժականութիւնը կորսնցնող գաղութին վրայ: Գաղտնիք չէ, որ մենք այսօր իրեն գաղութի նոյն համարները չունինք. եւ քանակի անկումին հետ բնականաբար տեղի կ'ունենայ նաեւ որակի համեմատական անկում. չունինք նոյն տնտեսական ուժը, չունինք նոյն մասնագէտները, դպրոցներու նոյն թիւը, հայ աշակերպութեան նոյն թիւը, մամուլի միեւնոյն տպագրանակը եւ նման երեւոյթներ:

Բայց չունինք նաեւ իրաւունքը յուսալը՝ ելուի եւ իր բախտին ձգելու այս գաղութը, որ տարիներ շարունակ մարդուժ «արտադրած» է ամբողջ Սփիւռքին, որ իր մասնակցութիւնը բերած է հայ ժողովուրդի օրհասական պայքարներուն եւ իր նիւթաբարոյական

ներդրումը բերած՝ Հայաստանի պետականութեան կայացման գործընթացին: Մենք կը հաւատանք, որ այս գաղութը տակաւին ունի իւր յայտնուել ներուժ՝ հայ ժողովուրդի բազմաճակատ պայքարին մէջ իր անհամեմատելի ներդրումը ունենալու:

«Տնտեսական տագնապ» ըսելով ենք պէտք չէ պահուելով՝ յայտարարելու համար, որ «անելիք» չունինք:

«Ա.Ջ.Դ.Ա.Կ».- Բայց կան նիւթական չզոյնութեան պատճառով առողջապահական շատ լուրջ լսողիւրներ, նոյն պատճառով հայկական վարժարաններէն շաշկերտութեան արտահոսք, միեւնոյն պատճառով՝ միութեան կան կեանքի աշխուժութեան նուազում...:

ՅՈՎԻԿ ՄՄԻԹԱՐԵԱՆ.- Չեմ ժխտեր, որ նիւթականը հիմնական պատճառն է այս տիրուր երեւոյթներուն. բայց կա՞յ, օրինակ, միայն հայ դպրոցին համար եկամուտներ ապահովող ծրագրերներու մշակում՝ խորհրդանշական կրթաթոշակ գանձելու տրամաբանութեամբ. դոյնութիւն ունի՞ ծրագիր համապատասխան նախարարական ծառայութիւններու հետ գործակցաբար հիւանդանոցային գրեթէ անվճար բուժումներ ապահովելու մեր համայնքի գաւակներուն, եւ այլն: Ըսել կ'ուզեմ, որ այդ, տագնապը կայ, բայց պարտաւոր ենք իրեն կուսակցութիւն, քաղաքական գործիչներ, ազգային իշխանութիւններ եւ բարեսիրական միութիւններ տագնապի շրջանցման գանազան ծրագրերու մշակելու եւ գանձելու կենսաբի կոչելու:

«Ա.Ջ.Դ.Ա.Կ».- Այս ծրագրերը ովքե՞ր պիտի մշակեն. կամ անոնց գործարարութեան ով պիտի վերահսկէ:

ՅՈՎԻԿ ՄՄԻԹԱՐԵԱՆ.- Իւրաքանչիւր մարդ ունի իր համապատասխան կառոյցը կամ հաստատութիւնը, անոնք ըլլան բարեսիրական, ընկերային, կրթական թէ՛ այլ: Մենք իրեն կուսակցութեան պատրաստ ենք բոլոր միջոցներով քաջալերելու եւ օժանդակելու յատկապէս ժողովրդային զանազան կարիքներու վերաբերող բոլոր եւ բազմակարգակաշխատանքներուն:

Ժամանակն է, եթէ ուշ չենք արդէն, որ գանազան մարգերու ղեկավարման մասնագիտական մօտեցումը ցուցաբերենք, որպէսզի ապահովենք արդիւնաւէտ գործունէութիւն: Իսկ նման տարողութեամբ գործի յաջողութեան համար մենք կը հաւատանք միջկուսակցական եւ միջարանուսական ամբողջանուէր գործակցութեան՝ ի խնդիր այս գաղութի կազմակերպ ուժի վերածման եւ երբեմնի ուժականութեան վերատիրացման:

«Ա.Ջ.Դ.Ա.Կ».- Ծնորհակալութիւն այս հարցազրույցին համար:

Հարցազրույցը վարեց՝ ՀՐԱԶ ՎԱՐՁԱՊԵՏԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ԿԱՄՔ»Ի

ՕՐԱԹԵՐԹԵՐԸ ԿԱՐԻՔ ՌԻՆԻՆ ՄՈՄԱՎԱՌՈՒԹԵԱՆ...

(11 Փետրուար 1985 - 1 Փետրուար 2002)

«Կամք» իր ճակատին դրուած տարեթիւ կը փոխէ այսօր: Անոր կենքի տարիներուն դիզուած սփիւռքեան պայմաններուն ծանօթ ու հոն ապրողին համար միայն հրճուանք կրնայ յառաջացնել:

Ան իր դիմանալու, դիմադրելու, հոսանքին դէմ կռուելու ուժականութիւնը առած է յամառ կամուրջէն, հաւատքէն եւ ապագայի տեսլականէն:

Քիչեր է, որ կը յանդգնին նման հերոսութիւններ յանձն առնելով ճամբայ ելլել, սակայն անոր պտուղը կը հասնի շատերու, սերունդներու:

Աշխարհի տարածքին, այսօր, ազգային ամէնտեսակ տագնապներ ու մտահոգութիւններ ունեցող ժողովուրդներ ըլլան անոնք թէ՛ ոչ, կը զգան գրաւոր մամուլին դիմագրուած դժուարութիւնները: Արդիականացման ընթացած առաւելութիւնները թէ՛ եւ կը հասնին բոլորին, սակայն մամուլը կը կրէ անոր վնասները եւս. այնուհետեւ նախապատեւելի մարդկութիւնը հաւատարմով զբաւորի փոխանցած ուժին՝ անոր գոյատեւման համար ողբի բոլոր աշխատանք կը տանի:

Հայկական կենքը, անշուշտ, տարբեր ըլլալով հանդերձ իր պայմաններով ու միջոցներով, ո՞չ միայն ին արարանքատուր իր էութեամբ անոնցմէ, այլ նաեւ ունի իր վրայ դրուած յաւելեալ պարտադրանքներ ու պարտաւորութիւններ: Հայ կենքին մէջ էական

կարեւորութիւն ունի, որքան դպրոցը, ակումբը, նոյնքան հայատառ մամուլը, որովհետեւ ան մշակոյթ է, հայերէն լեզուի մտածողութեան փոխանցում է:

Հայկականութեան հետ կապուած հարցերը կամ հայկականութիւնը սոսկ նիւթեր չեն, որպէսզի կարելի ըլլայ անոնց ծանօթանալ ու գանոնք ճանաչալ տարբեր միջոցներով, անոնք ողբ են, լեզու են, փոխանցելի ապրում, ան հոս է, որ հայատառ օրաթերթին նշանակալի ու անմիջական կարեւորութիւնը կը պարզուի՝ մեկնելով իր ամէնտեսակ ներկայութեանէն:

Իսկ եթէ մենք չենք յաջողիլ թափանցել հայատառ թերթին կամ գիրքին ներս ու հասկընալ զայն, այս պարագային իրաւունք չունինք յանցանքի բաժինը բեռնելու ո՞չ թերթին, ո՞չ գիրքին, ոչ ալ լեզուին ուսերուն, այլ պարզապէս այդ կը գառնայ մեր անձեռնհասութեան հետեւանքը:

Հայ մարդը տպագրական գիւտի առաջին օրերին ի վեր քայլ պահած է անոր հետ ու հրատարակել թերթը, ի՞ր գիրքը, ի՞ր լեզուին, հայ մարդուն փոխանցելու համար այդ սրբութիւնը: Ու հայատառ թերթը մեզի համար կը մնայ սրբութիւն: Երբ ան մասնաւանդ ամէնտեսակ իր մեկնելով կը մտնէ իւրաքանչիւրիս պտուներուն մէջը, մեզի կը բերէ մեր դարաւոր պատմութեան մասունքը՝ ճգնաժամներ յաղթահարելու, անդհանրէն, տուայտանքէն դուրս գալու եւ ազգի մը փրկարար լատար ըլլալու մես-

րոպեան գիւտը: Ամէն օր անով հաղորդուիլը օրհնութիւն է գիտակցից հայուն ու մասնաւանդ քաղաքականացած հայ մարդուն համար, որովհետեւ պարզ ու մեկին պէտք է ըլլայ, թէ լեզուն ինքը քաղաքականութիւն է՝ ղէպի կատարեալ անկախութիւն առաջնորդող: Այսօր քաղաքականացած միտք մը իրաւունք չունի չանդրադառնալու այս մտածողութեան, որովհետեւ միայն ողբին չի բաւեր փրկելու ազգը, լեզու ու ողբ լրացուցիչ ազգակներ են ու լեզուն կը մնայ պատմութեան ու մշակոյթին հաղորդուելու կենարար ջիղը, այլապէս ժողովուրդներ ինչո՞ւ պիտի տեսականացնէին բարեւոյնեան լեզուներով աշխարհի մը շարունակումը:

Հայատառ թերթին տարեդարձը կը լինենք, որովհետեւ կը հաւատանք անոր գոյութեան ու նպատակին:

Իսկ անոր պաշտպանութիւնը կ'ենթադրէ գիտակցութիւն: Ինքնութիւնը գտած ու ինքզինք յարգող իւրաքանչիւր հայու պարտականութիւնն է տէր կանգնիլ մեր մշակոյթին, առաջմ կենդանի ու շրջուն այս կոթողին՝ լեզուին, որուն նշանակալի ձեռնարկեցին ու իրենց միջոցներով փորձեցին իրագործել թերթական ու համայնակարական վարչակարգերը:

Գէթ չստատարենք անոր կորուստին... Վերջը եղած ափսոսանքները ոչինչ կը բուժեն...

Հրամանատար Գեորգի

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԴԵՐԳ ԶԵ

Կ'ԸՍԷՆԱԽԱՐԱՐ ՍԵՄԻՐ ԺԸՍԸՐ



Արդարադատության նախարար Սեմիր ժըսըրը յայտարարեց, որ կառավարական փոփոխության մասին խոսակցությունը ճիշդ է, վարչապետը միտում է ունենալ հրաժարելու երկու կողմից արված քննարկումները կը մնայ իրագործելու համար իր տնտեսական ծրագրերը: Ան ցկատեց, որ պիտու է քննարկելու իրենց եկալու ցույց տալու կառավարության և անոր տնտեսական միջոցառումներում գծով գոյություն ունեցող վստահությունը:

Մենք առեւտրականներուն դեմ չենք, սակայն կը փորձենք բեթեւեւընել մարդոց բերելու եւ արտահանման դոնորներ բանավոր մրցակցությունը իրականացնելու համար, ինչ որ ապագային կը բացահայտվի: Այս մեկը դրականօրէն պիտի անդրադառնայ ղրդրին, եւ մանաւանդ առեւտրականներուն վրայ, ինչպէս նաեւ Լիբանանը պիտի վերածէ զարգացած կեդրոնի մը՝ բոլոր մակարդակներուն վրայ, ըլլան անոնք տնտեսական, առեւտրական թէ գրաստանային:

Պատասխանելով հարցումի մը՝ Գեորգի ժըսըրը շեշտեց որ եւ ժողովրդավարական վարչակարգի եւ մանաւանդ Լիբանանի մէջ ընդդիմութեան առկայութեան կարեւորութիւնը: Խօսելով կառավարական փոփոխութեան շուրջ եղած խոսակցություններուն մասին, ան ըսաւ. «Կառավարական փոփոխութիւնը ունի որոշակի պայմաններ, եւ չեմ կարծեր, որ ներկայիս կայ որեւէ միտում մտնելու փոփոխութեան մը համար. այսուամենայնիւ լիբանանեան սահմանադրութիւնը կառավարական փոփոխութեան մասին կը խօսի այն ժամանակ, երբ վարչապետը կամ կառավարութիւնը կը հրաժարի կամ ալ խորհրդարանը իր վստահութեան քունը չի տար կառավարութեան: Այսօր ոչ մէկը հրաժարական տալու միտում ունի: Ասոր համար ալ բոլորը հանգիստ թող զգան իրենք գիրքնք այն իմաստով, որ կառավարութիւնը պիտի մնայ իր տնտեսական ծրագիրը իրագործելու համար:

«ԱՆՈՒՐ»

Ան յստակացուց, որ կառավարութիւնը առեւտրականներուն դեմ չէ, եւ վերջերս որպէսզբուրեւ միջոցառումները դրական կերպով պիտի անդրադառնան բոլոր մարզերուն վրայ, նկատել տալով, որ համեստ եկամուտի տեք ժողովրդային զանգուածներուն վրայ յաւելեալ արժեքի տուրքը չի կիրարկուիր:


ԶՐՈՅՑԻՆ ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախարար ժըսըրը վերոյիշեալ կեցուածքները արտայայտեց Հիւսիսի մէջ Մուսքաբայի շարժումի կեդրոնին մէջ տեղի ունեցած գրոյցի մը ընթացքին: Սկսելով իր խօսքը՝ նախարար ժըսըրը յստակացուց, որ «նախարարաց խորհուրդին մէջ վերջերս որպէսզբուրեւ միջոցառումները կը միտեն ջնջելու հովանաւորութիւնը եւ ոչ թէ առեւտրական միակ ներկայացուցչությունները: Ոչ որ կրնայ ջնջելու ներկայացուցչությունները, որոնք գլխաւորաբար համաձայնագիրներ են երկու կողմերու միջեւ»:

Ան աւելցուց. «Առաջին տպաւորութեամբ մարդիկ զգացին, թէ առեւտրականները պիտի ազդուին այս միջոցառումներէն, սակայն կ'ուզեմ ճշել, որ

ԲԱԼԵԼՈՒ ՅԱԲԵԼԵԱԼ ԿԱՍՈՒՐՁՆԵՐ ԸԱՍՏԱՏԵԼՈՒ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԿԸ ԶԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ՄԱՅՐՈՒՂԻՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԱՐԿԱԾԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՄԱՀԱՑԱԾ Է 140 ՀՈԳԻ

Անգամ մը եւս հանրագուտ աշխատանքներու նախարարութիւնը կը ծրագրէ հետիոտներու յատուկ յաւելեալ կամուրջներ կառուցել Լիբանանի զանազան շրջաններուն մէջ: Նախարարութիւնը նախապէս նման ծրագիր մը մշակած էր, սակայն քանի մը կամուրջ կառուցելէ ետք ծրագիրը դադարեցաւ իրագործուելէ:



Ընչ քարծրացաւ 80ի, ինչ որ բաւական լաւ ցուցանիչ մըն է:

Ընկերային Զգուշութեան Երիտասարդներու Ընկերակցութիւնը (ԵԱԶԱ) պահանջած է յաւելեալ կամուրջներ կառուցել: Ընկերակցութեան նախագահ Զիտ Ազըլ ըսած է, թէ 15 Մայիս 2001ին հեռախօսիչ սփռուող լայնազիրի մը ընթացքին հանրագուտ աշխատանքներու նախարարութեան ներկայացուցիչը խոստացած է 77 նոր կամուրջներ հաստատել Լիբանանի մէջ: Ան իր այս խոստումը կրկնած է յայտագիրէն մէկուկէս ամիս ետք՝ ըսելով, թէ ծրագիրին իրականացումը կառավարութեան համար ծախս չէ: Զ. Ազըլ նշած է, թէ խոստումէն 9 ամիս ետք մէկ կամուրջ կառուցուած է: Ան ըսած է, թէ տարեկան 140 հոգի գոհ կ'ըթրայ մայրուղիներու վրայ պատահած արկածներուն: Հետիոտներու կամուրջները այս թիւը կը նուազեցնեն 50ով: Զ. Ազըլ նշած է, թէ այս ծրագիրը շատ աւելի նուազ գումարներու կը կարօտի, քան իրագործուող այլ ծրագիրներ: Մենք 6 տարիէ ի վեր կը պահանջենք այս ծրագիրին իրականացումը, որովհետեւ փաստորէն անոնք կը պակասեցնեն մահացողներուն թիւը: Օրինակ՝ Նահր էլ Մոթի կամուրջէն կ'անցնի մարդոց 99 առ հարիւր: տարիներ առաջ հոն կը մեռնէին տասնեակներով մարդիկ: Այդ պատճառով անպայման պէտք է որոշ շրջաններու մէջ կամուրջ կառուցել:

Ան ըսած է, թէ պատասխանատուները պէտք է հետեւին քայլերու յատուկ օրէնքներու ճշգրիտ կիրարկում ապահովելու համար: Ան աւելցուցած է, թէ այսօր ինքնաշարժի արկածներուն մեծամասնութիւնը կը պատահի քրեւու ընթացքին քրոդին անուշադրութեան եւ մանաւանդ ընթացքին հեռաձայնով խօսելու պատճառով: Այս պարագային յարմար լուծում չկրցան գտնել նոյնիսկ եւրոպական երկիրները: Շատեր կը կարծեն, թէ ականջի յատուկ կազմածի օգտագործումը կը լուծէ հարցը, սակայն ասիկա ճիշդ չէ: Ըստ անոր, հեռաձայնով խօսելու համար վարորդը պէտք է ինքնաշարժը կեցնէ եւ աղպէս խօսի:

Զ. Ազըլ նաեւ անդրադարձած է ինքնաշարժի արկածներուն զոհերուն, որոնցմէ տարեկան 400ը անմիջապէս կը մահանայ, իսկ 323ը՝ որոշ ժամանակամիջոց մը ետք:

Ան այս թուային պատկերները միջակ համարեց, եթէ նկատի առնենք Լիբանանի ժողովուրդն ու ինքնաշարժներուն թիւը: Ան նշած է, թէ վերջին 6 տարիներուն զգալիօրէն նուազած է արկածով մահացողներուն թիւը, որ տարեկան 700ի կը հասնէր:

ՀԱԼԱ ՊՈՒԹՐՈՍ

«Անուար»

ՊԵՅՐՈՒԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ՝ ՏՈՒՆ ՄԸ ՏԱՐԲԵՐ ԲՆԱԿԻՉՆԵՐՈՎ

Զէյնապ գիրք մը առած կը կարդայ, իսկ իր քով նստած միւս աղջը՝ նա կը պահուի փայտեայ գրասեղանին առջեւ նստած՝ մանկապատանեկան գիրք մը կը թերթատէ. անոնց հայրը, իրենցմէ քանի մը քայլ անդին, մեծ սեղանին առջեւ քննութեան թուղթեր կը սրբագրէ: Զէյնապ կ'ըսէ, թէ ընդհանրապէս իրենց այս պոստին մաս կը կազմէր նաեւ երրորդ քոյրը, իսկ մայրը կը մնար տունը: Գրադարան յաճախողները կու գան զանազան շրջաններէ՝ 2-3 ժամ հանրային գրադարանին մէջ ժամանակ անցընելու: Ասիկա Լիբանանի հանրային առաջին գրադարանն է, որ կը գտնուի Պէյրութի Բաղաբապտարանի շէնքին երկրորդ յարկը՝ Պաշուրայի շրջանի հրէշներու կեդրոնին կից:



Այս գրադարանը Լիբանանի առաջին գրադարանն է, որ շուրջ տարի մը առաջ իր դռները բացաւ, որպէսզի այդ «տան» մէջ հիւրընկալէ բոլոր ընթերցասէրները: Գրադարանը Լիբանանի առաջին բաժանմունքները, կան գրելու հանգստաւէտ սեղաններ, բազմակիթոններ եւ նոյնիսկ բաժին մը, ուր կարելի է գետնին նստիլ եւ կարդալ:

Կայն՝ լուծեան մէջ. բան մը, որ տարիներէ ի վեր չէի կրնար գտնել»:

Ըստ վիճակագրութեան եւ հոն աշխատող պաշտօնեային, գրադարան այցելողները ընդհանրապէս այդ շրջանին են: Այս կը նշանակէ, թէ գրադարանը իր նպատակը կ'իրագործէ, որովհետեւ անիկա համալսարանի մը գրադարանէն կամ ազգային գրադարանի չէ եւ հոն այցելողները բարձր ուսում ունեցող անհատներ պիտի չըլլան անպայման, այլ՝ պարզ քաղաքացիներ:

Գրադարանին մէջ յատուկ բաժին մը կայ, ուր գետնի վրայ են թերթերն ու ամսաթերթերը: Կան մարդիկ, որոնք օրական կու գան միայն թերթերը կարդալու եւ առօրեայ լուրերէն տեղեակ ըլլալու:

Ղեկավարութիւնը ընդհանրապէս կ'արգելէ զանազան տեսակի գրքերի փոխառումը: Անոնք նաեւ կարծանգիստի ժամեր կ'անցընեն՝ թերթեր եւ ամսաթերթեր կարդալու համար:

Գրադարանը կը համախմբէ տարբեր մարդիկ եւ անոնց կու տայ բոլոր հանգստաւէտ պայմաններն ու իրաւունքները իրենց ուզածը ընելու: Կայ կնոջական եւ խոհանոցի վերաբերող գիրքերու բաժանմունք կ'ընդունին համար, այլ բաժին մը փոքրերուն՝ մանկապատանեկան գիրքերով: Անոնք նաեւ ունին իրենց յատուկ գրադարանած գորգերով անկիւնը, փոքր թուղթերն ու սեղանները: Մանուկները գրադարան այցելելով՝ աւելի կը մտնեն գիրքերուն, կ'ընտելան անոնց գոյութեան եւ հետզհետէ կը սիրեն գտնելու:

Այս գրադարանին մէջ կան նաեւ այն գիրքերը, զորս ուղարկած են Ֆրանսական կառավարութիւնը եւ կրթական կեդրոնը: Կան նաեւ գիրքեր, որոնք նուիրուած են լիբանանեան կազմակերպութիւններուն կողմէ: Կան 15 հազար գիրքեր, որոնց 3 հազարը մանկապատանեկան են:

«Մաֆիր»

(Յապաւուած)

ՏԱՅԱ ՀԱՅՏԱՐ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ՓՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Դիւանագիտական լաւատեղեակ աղբիւրները կը յայտնեն, որ արաբական վեհաժողովի գումարան հարցը լուրջ խոչընդոտներ կը դիմարկուէ, հակառակ անոր որ արաբական քարոզչութիւնը եւ կարգ մը արաբ պաշտօնատարներ կը ճգնին հաստատելու, որ վեհաժողովը պիտի գումարուի իր ժամանակին, եւ ամերիկեան ճնշումները արաբներուն պիտի չարգիլեն Պէյրութի մէջ ժողով գումարելէ:

Մակայն Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա տարբերակեալ ձևով արաբական քարոզչութեան իրեն հանդիպած այլ ղեկավարներու առջեւ ակնարկեց այն իրողութեան, որ վեհաժողովի կայացման կարելիութիւնները նուազած են, եւ կազմութիւնը փրկելու համար տակաւին մեծ ջանքեր կը թափուին, մանաւանդ որ արաբները կը մերժեն ենթարկուիլ կատարուած իրողութեան, որպէսզի չըսուի, թէ Միացեալ Նահանգներ խանգարեցին վեհաժողովին կայացումը:

Մակայն Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա տարբերակեալ ձևով արաբական քարոզչութեան իրեն հանդիպած այլ ղեկավարներու առջեւ ակնարկեց այն իրողութեան, որ վեհաժողովի կայացումը կարելիութիւնները նուազած են, եւ կազմութիւնը փրկելու համար տակաւին մեծ ջանքեր կը թափուին, մանաւանդ որ արաբները կը մերժեն ենթարկուիլ կատարուած իրողութեան, որպէսզի չըսուի, թէ Միացեալ Նահանգներ խանգարեցին վեհաժողովին կայացումը:

Մակայն Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա տարբերակեալ ձևով արաբական քարոզչութեան իրեն հանդիպած այլ ղեկավարներու առջեւ ակնարկեց այն իրողութեան, որ վեհաժողովի կայացման կարելիութիւնները նուազած են, եւ կազմութիւնը փրկելու համար տակաւին մեծ ջանքեր կը թափուին, մանաւանդ որ արաբները կը մերժեն ենթարկուիլ կատարուած իրողութեան, որպէսզի չըսուի, թէ Միացեալ Նահանգներ խանգարեցին վեհաժողովին կայացումը:

Մակայն Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա տարբերակեալ ձևով արաբական քարոզչութեան իրեն հանդիպած այլ ղեկավարներու առջեւ ակնարկեց այն իրողութեան, որ վեհաժողովի կայացումը կարելիութիւնները նուազած են, եւ կազմութիւնը փրկելու համար տակաւին մեծ ջանքեր կը թափուին, մանաւանդ որ արաբները կը մերժեն ենթարկուիլ կատարուած իրողութեան, որպէսզի չըսուի, թէ Միացեալ Նահանգներ խանգարեցին վեհաժողովին կայացումը:

ՀԻՍՄ ԱՉՈՒՐԻ

«Տիրաք»

Կնոջական



ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

ԴՊՐՈՑԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ ԱՌԱՆՁԻՆ ՄՆԱՑՈՂ ԵՐԵՆԱՆ



Շատ մը մայրեր աշխատանքի բերումով առիթը չունին դիմադրելու դպրոցին վերադարձող երեխան, որ ստիպուած է ինքզինք դասաւորել, ուսել, լուսացուել եւ դասի սկսիլ մինչեւ ծնողքին տուն վերադարձը:

Ասիկա դիւրին կացութիւն մը չէ թէ՛ երեխային եւ թէ՛ մօրը համար, բայց երբ այլ ելք չկայ, պէտք է փորձել զանազան միջոցներով առաւելագոյն չափով «տանելի» դարձնել փոքրիկին առանձնութիւնը:

Հոգեբան Նիքոլ Փրիֆօր, որ նաեւ հեղինակն է «Կրանտիր աւեր սե Գ'անֆան» գիրքին, կ'ըսէ, թէ 8-9 տարեկանին սկսեալ կարելի է երեխայ մը տունը առանձին ձգել, անոր տան բանալին վստահել, եւ այլն, բայց եւ այնպէս երեխան պէտք է ապահով զգայ եւ վստահ ըլլայ, որ ի հարկին չափահաս մը իրեն օգնութեան պիտի հասնի:

Հետեւեալը առանձին ձգուած երեխային քով պէտք է յստակօրէն արձանագրեն անմիջական հարազատներու հեռաձայնի թիւերը եւ կարեւոր այլ թիւեր, որպէսզի վտանգի մը պարագային ան գիտնայ, թէ որո՞ւ պէտք է դիմէ: Տան բանալին օրինակներ պէտք է տրուին այդ հարազատներուն, որպէսզի ի հարկին երեխային օգնութեան փութան:

Միւս կողմէ, երեխան կարիք ունի զգալու, թէ ինք լքուած չէ, որ իր առանձնութիւնը պարտադրաբար, բայց ժամանակաւոր է, եւ թէ ինք բոլորին ուշադրութեան եւ հոգածութեան առարկան է:

Տուն վերադարձող երեխան կրնայ այս բոլորը զգալ, որ սեղանին վրայ տեսնէ իր սերած մէկ անուշեղէնը, մօր կողմէ գրուած ազնիւ երկտող մը, հեռաձայնային խօսակցութիւն մը, եւ այլն:

Տուն դառնալէ ետք մայրը, որքան որ ալ յոգնած ըլլայ, որքան որ ալ տան գործերը դիզուած ըլլան, այդ բոլորը մէկ կողմ ձգած՝ նախ եւ առաջ պիտի զբաղի իր երեխայով: Երեխան թող պատմէ օրուան անցուղարձերէն, իսկ մայրը համբերութեամբ եւ մեծ հետաքրքրութիւն ցուցաբերելով թող լսէ այդ բոլորը: Մինչեւ երեխային անկողին մտնելը թող երեխան շրջապատուած զգայ եւ վերջը միայն մայրը թող մտածէ զինք սպասող պարտականութիւններուն մասին:

Հոգեբան Փրիֆօրի կարծիքով, դպրոցէն վերադարձն առանձին մնացող երեխան նուազ կը տառապի առանձնութիւնէն, եթէ տան մէջ ընտանի կենդանի մը պահուի: Վերջապէս ան խօսքը ուղղելով յանցաւոր զգացող մայրերուն՝ կը վստահեցնէ, թէ ապահով եւ առողջ պայմաններու մէջ քանի մը ժամ առանձին ձգուած երեխան աւելի ինքնավստահ, անկախ եւ ինքնավար կը դառնայ, ինչ որ ապագայի հաշուոյն մեծ բարենիչ է իրեն համար:

ՓՈՐՁ - ԸԱՐՅԱՐԱՆ

ՏԻՊԱՐ ՏԱՆՏԻԿԻՆ ԷՔ

Գիտնալու համար, թէ տիպար տանտիկին էք, թէ ոչ, պատասխանեցէք վերոյիշեալ հարցումներուն՝ ընտրելով հաւանական 3 պատասխաններէն յարմարագոյնը: Ապա ցուցատախտակին հետ բաղադրելով՝ գումարեցէք ձեր հաւաքած թիւերը եւ կարգացէք վերջնական պատասխանը:

- 1 -
● Խոհանոցին մէջ նորոգութիւն կայ եւ ամէն կողմ տակնուվրայ է, իսկ ձեր ընտանիքը ձեզմէ ճաշ կը սպասէ...

● Ստիպուած էք թաղումի մը ներկայ գտնուելու եւ համապատասխան սեւ հագուստ մը չունիք:

● Մուտք գոյնի հագուստ մը կը հագնիք:

● Բարեկամուհիէ մը փոխ կ'առնէք:

● Խոշոր սեւ շալ մը կը նետէք ձեր ուսերուն...

- 2 -
● Բարեկամուհի մը կողով մը բալով անկողնի վրայ կ'այցելէ եւ կ'առնէ ձեր միասին անուշ պատրաստել:

● Միքով կ'ընդառաջէք:

● Դժգոհ, բայց ստիպուած կ'ընդառաջէք:

● Պատճառաբանութիւն մը կը գտնէք եւ կը մերժէք:

- 3 -
● Ձեր ամուսինը որսն կը վերադառնայ հետը բերելով մեծածախ թուղուններ...

● Կը մաքրէք թուղունները եւ բարեկամներ կը հրաւիրէք միասին ուտելու համար:

● Կ'առաջարկէք, որ թուղունները ուրիշին նուերէք:

● Ձեր մօրը կամ կեսբոնը կը դիմէք, որպէսզի թուղունները մաքրելու համար օգնեն ձեզ:

- 4 -
● Տան մաքրութեան ձեռնարկած էք եւ յանկարծ բարեկամուհի մը կը հեռաձայնէ եւ ճաշի կը հրաւիրէ ձեզ:

● Ամէն բան կիսատ ձգած կ'ընդառաջէք հրաւիրին:

● Կարգ մը գործեր կը ճաշելով նախ կ'ամբողջացնէք մաքրութիւնը, ապա կ'երթաք ճաշի:

● Կը մերժէք հրաւիրը՝ ուրիշ օրուան յետաձգելով զայն:

- 5 -
● Ստիպուած էք թաղումի մը ներկայ գտնուելու եւ համապատասխան սեւ հագուստ մը չունիք:

● Մուտք գոյնի հագուստ մը կը հագնիք:

● Բարեկամուհիէ մը փոխ կ'առնէք:

● Խոշոր սեւ շալ մը կը նետէք ձեր ուսերուն...

- 6 -
● Արդու կուրծքի հագուստները դիզուած են եւ յանկարծ կը նկատէք, որ արդու կը խանգարուած է:

● Կը փորձէք անձամբ նորոգել:

● Մօտակայ ելեկտրագէտին կը տանիք, որ պէսզի նորոգէք:

● Այդ գործը վաղուան կը յետաձգէք:

- 7 -
● Դպրոցական հաւաքոյթին ժամ մը առաջ ձեր տղան զրպանը պատուած շապիկը կու տայ ձեզի, որպէսզի նորոգէք...

● Անմիջապէս գործի կը լծուիք:

● Կը զայրանաք, բայց ստիպուած կը կաթուղունները ուրիշին նուերէք:

● Կ'երթաք եւ նոր շապիկ մը կը գնէք:

- 8 -
● Ձեր բացակայութեան վաճառատուն մը կը յանձնէ ձեր ապսպրած մէկ ապրանքը եւ ձեր ամուսինը կը կատարէ վճարումը: Տուն վերադարձին կ'առաջարկուինք, որ որոշուած գինէն շատ աւելի գանձուած է ձեր ամուսինէն...

● Անմիջապէս վաճառատուն կ'ուղղուիք, որպէսզի յաւելեալ դանձուած դրամը ձեզ հարկէք:

● Պատահածը պատահած է, չէք հետապնդեր հարցը:

● Ձեր ամուսինին կը խնդրէք, որ երթայ եւ հարցը լուծէ:

- 9 -
● Ձեր ամուսինը շարժով մը ճամբորդած է, եւ տան ծորակներէն մէկը խանգարուած է ու կը կաթկթի...

● Լաթ մը փաթեթելով կը փորձէք ճար մը գտնել:

● Փակահանգործ մը կը կանչէք:

● Կը ձգէք, որ ջուրը կաթկթի մինչեւ ձեր ամուսինին վերադարձը:

- 10 -
● Հիւրասենեակին պատերը կ'ուղկէք մուտք կայտ ներկել, իսկ ձեր

ՊԱՇՔԸ

Հայ եկեղեցւոյ կողմէ սահմանուած պահեցողութիւնը կամ պահքը հաւատացեալներու ինքնամոտիման, ինքնագոյնութիւն եւ ինքնասրբագրման միջոց է:

Պահքի օրերուն հաւատացեալները կամաւոր կը հրաժարին կենդանական իւղեքն եւ միսէն: Անցեալին պահքը միայն ծոմապահութիւն էր (առհասարակ բան չուտել կամ միայն սահմանափակ ուտելիքներով՝ հացով, ջուրով եւ աղով բաւարարուիլ), որուն չէին դիմաճարմարմնապէս տկարները: Հետագային եկեղեցին յարմար գտաւ արտօնել բանջարեղէն ու ընդդէմը՝ արգիլելով մսեղէն ու կենդանական իւղերը:

Հայ եկեղեցւոյ կողմէ պահքի օրեր սահմանուած են Չորեքշաբթի եւ Ուրբաթը (Քրիստոսի մատնութեան եւ չարչարանքի օրերը): Եկեղեցական կարեւոր տօները ունին իրենց շաբաթապահքերը, իսկ տեւողութեամբ ամէնէն երկարը՝ Մեծ Պահքը, Չատուկան Գալարի թառամօրեայ պահքն է:

Հայ ժողովուրդը ունի պահքի կերակուրի յատուկ տեսակներ, որոնք ոչ միայն դիւրամարս են, այլեւ առողջարար եւ օգտակար: Անոնց մէկ մասը կը պատրաստուի մեծաքանակ եւ գով տեղ պահուելով՝ շաբաթներ շարունակ կ'օգտագործուի:

Ձեթի փոխարէն մեր ժողովուրդը յաճախ կ'օգտագործէ ընկոյզ, ինչպէս նաեւ արեւածաղիկի սերմերէն, կանեփի, ծմբուկի կամ սեխի կորիզներէն տնային պայմաններու մէջ պատրաստուած բուսական իւղը՝ խիւրը:

Նշենք, որ պահքի օրերուն հաւատացեալներուն թոյլատրելի չէ խրախնայ կամ հրաւանքի կատարել, որովհետեւ այդ օրերը յատկացուած են մեղքերու համար սուգ պահելու եւ ապաշխարելու:

ՆՈՒՆԱԳԻՐ

ՁԻԹԱՊՏՈՒՂՈՎ ԴԴՄԱԾ

	ա	բ	գ
1	8	10	4
2	9	0	2
3	8	3	6
4	2	10	7
5	3	5	8
6	9	4	1
7	9	0	1
8	10	0	3
9	7	4	9
10	5	9	0
11	10	1	4
12	7	8	3

- Պատասխան. -
- Եթէ ձեր թիւերուն գումարը 100 եւ աւելի է, դուք տիպար կ'ին եւ տանտիկին էք, ձեր պարտականութիւններուն գիտակից, պարտաճանաչ եւ խնայասէր էք: Դուք ձեզ հանձնելու չէք ձեր անձնական եւ ընտանեկան կեանքը պայքարելով բոլոր ճակատներու վրայ:
- Եթէ 80 - 100 կէտի միջեւ հաւաքած էք, անկասկած որ ձեր ամուսինը հպարտ է ձեզմով եւ երախտապարտ է ձեր բոլոր գոհողութիւններուն համար:
- Եթէ 80 - 60ի միջեւ հաւաքած էք, մասամբ կը թերանաք ձեր պարտականութիւններուն մէջ, յաճախ տունը երեսի վրայ ձգուած է եւ առանց նաւապետի, լքուած նաւու մը կը նմանի:
- Շատեր կը մեղադրեն ձեզ, ժամանակն է, որ յաւելեալ պատասխանատուութիւններ ստանանէք:
- Եթէ հազիւ 60 կէտ հաւաքած էք, թերեւս տակաւին փորձառու չէք, ժամանակը կը լուծէ որոշ հարցեր, պայմանաւոր պատրաստակամութիւն ցուցաբերէք ձեր լաւագոյնը կատարելու:
- Եթէ հազիւ 60 կէտ հաւաքած էք, թերեւս տակաւին փորձառու չէք, ժամանակը կը լուծէ որոշ հարցեր, պայմանաւոր պատրաստակամութիւն ցուցաբերէք ձեր լաւագոյնը կատարելու:

Պատրաստութիւն. -
3 լիթր աղի ջուրի մէջ խաշել դրամաճը, քամոցէ անցնել եւ ձգել, որ պաղի:

Տապակի մը մէջ 2 դգալ ձիթախաղի մէջ դարձնել մանրուած սոխն ու կտրտուած պղպեղը, ապա աւելցրենել չորսի կուրուած լոլիկները (նախընտրաբար կեղուցուած), ծոթիները, աղը, պղպեղը եւ 3 վայրկեան եւս եփել:

Խառնուրդին աւելցնել դրամաճը եւ ձիթախաղը եւ մէկ վայրկեան եւս կրակին վրայ ձգել:

Աղցանի ամանի մը մէջ լցնել ղրամաճը, աւելցրենել մնացեալ ձիթախաղը, քացախը, մանրուած թթուաշերտ եւ ազատ քեղը:

Զգուշօրէն խառնել եւ ձգել, որ պաղի: Նախընտրաբար հրամցնել ձկնեղէնի մը կողքին:

Պատրաստեց ՇՈՒԹԻԿ ՄԱԻՍԱԳԱԼԵԱՆ

«ԱՉԳԱԿ»Ի ՄԷՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժնումն ու հասցեն հրատարակման թուականէն առնուած օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00:

ՄԱՀԱՉԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այժման ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՄՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

ԱՌՈՂՁ ԵՒ ԳԵՂԵՅԻԿ ՄԱՉԵՐ

Մասնագէտներու կարծիքով, առողջ առատ, փայլուն եւ զեղեցիկ մազեր ունենալու համար պէտք է առատօրէն սպառել մածուց, հաւկիթ, սոխ, ծնեփեկ, հացահատիկ, թթիմոր, ընկոյզ, միս եւ լուրիս:

Նոյն մասնագէտներուն համաձայն, մեր առողջական վիճակը, ինչպէս նաեւ մեր սննդեղէնը, անմիջականօրէն կ'ազդեն մեր մազերուն թէ՛ առողջութեան եւ թէ՛ արտաքին տեսքին:

ՄԱՂՁ, ԹԷ ԱՂՁԻԿ

Ֆրանսական Բոշէն հիւանդանոցին կատարած ուսումնասիրութիւններուն համաձայն, այսուհետեւ գոյգերը սկիզբէն կրնան որոշել իրենց զաւակներուն սեռը:

Այսպէս, եթէ մայր մը յղի մնային 2 ամիս առաջ հետեւի որոշ սննդականոնի մը, կրնայ 87 առ հարիւրով որոշել իր ապագայ մանուկին սեռը:

Մանչ գաւակ ունենալու համար պէտք է առաւելաբար սնանի միսով, ձուկով... Աղջիկ գաւակի պարագային՝ մածուցով, կաթնեղէնով, կաղինով, նուշով, ընկոյզով...

Սթոնքով սքի կոչուած այս սննդականոնին պէտք է բառացիօրէն հետեւի ճիշդ արդիւններուն հասնելու համար:

Այսուհանդերձ այս սննդականոնը չի յարմարի արեան զերծնելու եւ շաքարախտ ունեցողներուն:

ԱՄԲՈՂՁԱԿԱՆ, ԹԷ ԳԵՂԵՅԻԿ ԲՐԻՆՁ

Գիտէ՞ք, թէ ամբողջական բրինձը աւելի հարուստ է բնաթելերով, հանքայիններով, կենսաանութիւններով, եւ օլիկո-էլէմանտներով: Իւրաքանչիւր 100 կրամ կը պարունակէ 43 միլիկրամ մականեղիմ, 9 միլիկրամ կիր, 79 միլիկրամ փոթաթիւմ, մինչդեռ ճերմակ բրինձը նոյն անոնքաւ կան արժէքը չի ներկայացնել:



Միւս կողմէ, սակայն, ճերմակ բրինձը շատ աւելի արագ կ'եփի, քան ամբողջականը, ինչ որ մեր դարուն եւ զբաղած կիներուն համար արժամաքահեղու տեսակի բրինձները կը հաւասարին, այն տարբերութեամբ, որ ամբողջականը նուազ շաքար կը պարունակէ, քան ճերմակը:

Միւս կողմէ, սակայն, ճերմակ բրինձը շատ աւելի արագ կ'եփի, քան ամբողջականը, ինչ որ մեր դարուն եւ զբաղած կիներուն համար արժամաքահեղու տեսակի բրինձները կը հաւասարին, այն տարբերութեամբ, որ ամբողջականը նուազ շաքար կը պարունակէ, քան ճերմակը:

